

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. մարտի 30-ի

նիստի /արձանագրություն N 13/

1. «Պատմություն և արդիականություն» խորագիրը կրող գիտաժողովի աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար Արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Գրիգոր Վրույրի Օրդոյանին և ամբիոնի վարիչի օգնական Նարինե Էդիկի Բերոյանին հայտնել գրավոր շնորհակալություն:

2. Կրթության և մշակույթի ոլորտում ներդրած ավանդի համար՝

2.1 Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի դոցենտ Սաթենիկ Զավենի Մաթևոսյանին ներկայացնել ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչման,

2.2 նախապատրաստական բաժնի վարիչ, պրոֆեսոր Ռուբեն Արամի Մարուխյանին ներկայացնել ՀՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման,

2.3 ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի պրոֆեսոր Նելլի Սողոմոնի Մարությանին ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի շնորհման,

2.4 ծննդյան 75- ամյակի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի պրոֆեսոր Զեմֆիրա Արտաշեսի Երիցյանին ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի շնորհման,

2.5 ծննդյան 75- ամյակի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի ավագ դասախոս Գևորգ Ղարիբի Եղիազարյանին ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի շնորհման,

3. Նամակով դիմել Երևանի քաղաքապետարան և խնդրել, որպեսզի ապրիլի 9-ին

կայանալիք շաբաթօրյակի շրջանակներում թույլատրեն մեր ինստիտուտի

ուսանողներին մասնակցել Երևանի քաղաքային պանթեոնի մաքրման

աշխատանքներին և ինստիտուտի բակում տեղադրեն 3 նստարան և աղբամաններ:

Սույն հանձնարարականի կատարման պատասխանատվությունը դնել պրոռեկտոր Հ.

Ավագյանի և ուսխորհրդի նախագահ Ա. Սարգսյանի վրա:

4. Ինստիտուտի հավատարմագրման աշխատանքները նախապատրաստելու և պրոֆեսորադասախոսական կազմին նախապատրաստական աշխատանքներին մասնակից դարձնելու նպատակով կազմել աշխատանքային խումբ՝ Նարինե Սարգսյանի, Վարուժան Ավանեսյանի, Աննա Երզինկյանի մասնակցությամբ: Սահմանել աշխատանքային ժամանակացույց:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան